Հաստատված է

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի թիվ 29/10-27.09.2022թ. որոշմամբ

Ուժի մեջ է մտնում 03.10.2022թ.

Խորհրդի նախագահ

---------- Ս. Սուքիասյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ԵՐԵՎԱՆ 2022

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ			
Հ/Հ	Որոշման/Հրամանի ամսաթիվ	Որոշման/Հրամանի համար	Փաստաթղթի նույնականացուցիչը
1	26.09.2019թ.	36/17-26.09.2019թ.	ISO/KG/A.7/041/26.09.2019/1
2	29.09.2020թ.	39/10-29.09.2020թ.	ISO/KG/A.7/041/29.09.2020/2
3	28.09.2021թ.	33/06-28.09.2021թ.	ISO/KG/A.7/041/28.09.2021/3
4	27.09.2022թ.	29/10-27.09.2022թ.	ISO/KG/A.7/041/27.09.2022/4

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) Աուդիտի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կազմն ու կառուցվածքը, խնդիրները, գործառույթները, գործունեության կազմակերպումն ու ընթացակարգը:

1.2. Հանձնաժողովը հանդիսանում է Բանկի խորհրդին կից խորհրդատվական մարմին, որը ստեղծվում է Բանկի Խորհրդի որոշմամբ:

1.3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի, ՀՀ ԿԲ կողմից ընդունված որոշումների, Բանկի ներքին իրավական ակտերի և սույն կանոնակարգի, Բանկի կառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների պահանջներով:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1. Հանձնաժողովիհիմնական նպատակն է Բանկի Խորհրդի աշխատանքների և նրա կողմից ընդունվող որոշումների արդյունավետության բարձրացումը, ներքին հսկողության համակարգի ուժեղացումը, ինչպես նաև Խորհրդի անդամների, Բանկի ղեկավարների, ներքին աուդիտի ստորաբաժանման, արտաքին աուդիտորի և ՀՀ կենտրոնական բանկի փոխգործակցության բարելավումը:

2.2. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

2.2.1. Բանկի ռիսկերի կառավարման, ներքին հսկողության գործառույթների պատշաճ իրականացման ուսումնասիրումը և հսկումը:

2.2.2. Ներքին աուդիտի կողմից խորհրդին ներկայացված ստուգումների և հետստուգումային հաշվետվությունների ուսումնասիրումը:

2.2.3. Արտաքին աուդիտի աուդիտորական եզրակացության (հաշվետվության և ղեկավարության նամակի) նախնական ուսումնասիրումը:

2.3. Հանձնաժողովն իր խնդիրներին համապատասխան կատարում է հետևյալ գործառույթները.

2.3.1. Բանկի ֆինանսական հաշվետվությունների և Բանկի գործունեության ֆինանսական արդյունքների վերաբերյալ պաշտոնական հայտարարությունների արժանահավատության ապահովման գործընթացի վերահսկման (ստուգման) իրականացումը:

2.3.2. Բանկի եռամսյակային և տարեկան հաշվետվությունների վերլուծության իրականացումը և դրանց հաստատման վերաբերյալ խորհրդին առաջարկությունների ներկայացումը:

2.3.3. Բանկի ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման, գործող օրենքներին, իրավական ակտերին և այլ պահանջներին համապատասխանելու համակարգերի գործունեության ստուգման իրականացումը:

2.3.4. Բանկի խորհրդին առաջարկությունների ներկայացումը Բանկի արտաքին աուդիտորի ընտրության չափանիշների, վարձատրության և այլ էական պայմանների վերաբերյալ:

2.3.5. Բանկի արտաքին աուդիտորի անկախության, օբյեկտիվության և արդյունավետության վերահսկման ու վերլուծության իրականացումը:

2.3.6. Տարեկան առնվազն մեկ անգամ արտաքին աուդիտորի հետ հանդիպումը:

2.3.7. Բանկի արտաքին աուդիտորի հաշվետվությունների վերլուծության իրականացումը և համապատասխան տեղեկատվության տրամադրումը խորհրդին:
2.3.8. Բանկի արտաքին աուդիտորի առաջարկությունների իրականացման հսկողությունը:
2.3.9. Բանկի ներքին հսկողության համակարգի վերաբերյալ քաղաքականությունների մշակման իրականացումը և դրանց ներդրման հսկողությունը:
2.3.10. Խորհրդի նիստերում քննարկվելիք հարցերի նախապատրաստումը, մանրամասն ուսումնասիրումը և քննարկումը:
2.3.11. Բանկի ներքին աուդիտի ստուգումների արդյունքների մասին և հետստուգումային հաշվետվությունների նախնական դիտարկումը և առաջարկությունների ներկայացումը խորհրդին:
2.3.12. Ներքին աուդիտի ստորաբաժանման ամենամյա ստուգումների պլանի կատարողականի նախնական դիտարկումը և առաջարկությունների ներկայացումը խորհրդին:
2.3.13. Ներքին աուդիտի ստորաբաժանման հաշվետվությունների հիման վրա Բանկի խորհրդի կողմից տրված հանձնարարականների կատարման գնահատումը:

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

3.1. Հանձնաժողովը կազմված է բացառապես խորհրդի անդամներից: Հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը պետք է լինի խորհրդի անկախ անդամ:
3.2. Հանձնաժողովի անդամ չի կարող լինել այն անձը, որը ներգրավված է Բանկի և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) ընթացիկ գործունեության ղեկավարման մեջ:
3.3. Հանձնաժողովի կազմը հաստատվում է խորհրդի կողմից և չի կարող 4 հոգուց պակաս լինել: Հանձնաժողովն ունի հետևյալ կառուցվածքը՝ նախագահ, քարտուղար, որը ի պաշտոնե խորհրդի քարտուղարն է, և անդամներ:
3.4. Հանձնաժողովի նախագահը ընտրվում է Բանկի խորհրդի կողմից և պետք է լինի խորհրդի անկախ անդամ: Խորհրդի նախագահի և Հանձնաժողովի նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:

4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

4.1. Հանձնաժողովի նախագահը՝ սեփական նախաձեռնությամբ, Հանձնաժողովի անդամի, Բանկի խորհրդի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի գրավոր պահանջով գումարում է Հանձնաժողովի նիստերը:
4.2. Հանձնաժողովի անդամները կարող են նիստերին մասնակցել իրական ժամանակի ռեժիմում հեռախոսային կապի, հեռուստակապի կամ այլ հաղորդակցական սարքերի միջոցով, որոնց շնորհիվ նիստին մասնակցող բոլոր անձինք ի վիճակի կլինեն լսել միմյանց: Նման ձևով նիստին մասնակցելը կհամարվի նիստին անձամբ ներկայություն:
4.3. Հանձնաժողովի նիստերը իրավազոր են, եթե անդամների առնվազն կեսից ավելին մասնակցում են նիստին:
4.4. Նիստերի արձանագրությունները վարում է քարտուղարը կամ նրա կողմից նշանակված անձը:
4.5. Արձանագրությունները ստորագրվում են նիստի մասնակից Հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

4.6. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները պահվում են առանձին թղթապանակներում՝ Բանկի Խորհրդում:

4.7. Հանձնաժողովի անդամ չհանդիսացող խորհրդի անդամները իրենց նախաձեռնությամբ կամ Հանձնաժողովի հրավերով կարող են մասնակցել Հանձնաժողովի նիստերին:

4.8. Հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել Բանկի աշխատակիցներ կամ այլ անձինք: